ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը**

Նարինե Նորեկյան, Սոցիալական ծրագրերի բյուջետային գործընթացի կազմակերպման վարչության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի ոլորտների բյուջետային ծրագրավորման բաժնի գլխավոր մասնագետ

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Ղազախստանի Հանրապետություն, ք. Ալմաթի 2023 թվականի հոկտեմբերի 2-ից 6-ը:

3. **Հրավիրող կողմը.**

ԱՄՀ, Կովկասի, Կենտրոնական Ասիայի և Մոնղոլիայի տարածաշրջանային կարողությունների զարգացման կենտրոն (CCAMTAC)

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

Մասնակցություն «Կլիմայի/Գենդերային բյուջետավորման աշխատաժողով (Climate/Gender budgeting workshop)» թեմայով աշխատաժողովին:

5. **Քննարկված թեմաները**

- Կլիմայի և գենդերային բյուջետավորման հասկացություն,
- ԱՄՀ գենդերային բյուջետավորման համակարգ. երկրների փորձ,
- «Կանաչ» համակարգը ՊՖԿ ոլորտում,
- Կլիմայական հարցերի ներառումը բյուջետային գործընթացում. Եվրոպական երկրների փորձը,
- Գենդերային ազդեցության գնահատում՝ քաղաքականության վերլուծություն գենդերային հավասարության ազդեցության վրա,
- Բյուջեի նշագրում. ինչ, ինչպես և ինչու: Նմանությունները և տարբերությունները գենդերի և կլիմայի պիտակավորման միջև,

Կլիման և գենդերը բյուջեի ցիկլում՝ բյուջետային շրջաբերականներ: Գենդերային բյուջետավորման գնահատման համակարգ. բարեփոխումների զարգացում:

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Տարածաշրջանային աշխատաժողովին ներկա են գտնվել 9 երկրի ավելի քան 30 մասնակից:

Համաժողովի ընթացքում ԱՄՀ, Կովկասի, Կենտրոնական Ասիայի և Մոնղոլիայի տարածաշրջանային կարողությունների զարգացման կենտրոնի ներկայացուցիչների կողմից ներկայացվել են զեկույցներ և դասախոսություններ, որոնք ուղեկցվել են

հարցուպատասխանի ռեժիմով: Ներկայացված զեկույցներին և դասախոսություններին հաջորդել են պանելային քննարկումներ, որոնց ընթացքում մասնակիցների կողմից ներկայացվել են իրենց երկրներում կլիմայի և գենդերային բյուջետավորման փորձը, առաջադրված խնդիրների լուծման հետ կապված առաջարկներ և կազմակերպվել քննարկումներ:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը**.

Այդպիսիք առկա չեն:

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Այդպիսիք առկա չեն:

9. **Ստորագրությունը, ամսաթիվը:**

10 հոկտեմբերի, 2023թ.